ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 հունվարի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

1
(3210)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՇՔԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔԻՑ

ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը գեղեցիկ լուսանկարով հայտնել է, թե քանի մարդ է գրանցվել Արմեդ համակարգում, որ օգտվի ապահովագրության դեռ շատ անհասկանալի տարրեր պարունակող համակարգից: Բայց լուսանկարի թվերը տպավորիչ չէին, սպասելի էր, ինչպես խոստովանում է հենց ինքը՝ նախարարը: Տպավորիչը նախարար Ավանեսյանի թանկարժեք գոտին է, որը Hermes (Հերմես) բրենդի գոտի է, "Kelly 18 belt". վերեւի ձիակառքի լոգոն հենց Hermes-ինն է: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրեց, որ նախարարի գոտին բնական բարձրակարգ կաշի է, ձեռքի աշխատանք, մանրակրկիտ կար ու եզրերի մշակում անցած: Ըստ պաշտոնական կայքի՝ նախարարի կապած գոտին արժե 1375 ԱՄՆ դոլար: Մեկ այլ լուսանկարում Անահիտ Ավանեսյանի շարֆիկն է աչքի զարնում. այն CHRISTIAN DIOR (Քրիստիան Դիոր) է, որը զեղչով արժե 64.000 դրամ: Հիշեցնենք, նույն Անահիտ Ավանեսյանն է, որ թանկարժեք պայուսակ է կրում 3132 $ արժողությամբ. այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը գրել է: Իհարկե, մոտ 10 մլն դրամ պարգեւավճար ստացած առողջապահության նախարարի համար այս թվերը մանրուքներ են, բայց 21.7% աղքատություն ունեցող մեր երկրում, երբ 649,000 մարդ աղքատ է, չի կարողանում իր օրվա նվազագույն զամբյուղն ապահովել, իսկ 0.6% ծայրահեղ աղքատ է՝ 18,000 մարդ, այսպիսի շռայլությունները արդեն ամբարտավանություն են: Հիշեցնենք, որ Նիկոլ Փաշինյանն ընդդիմադիր օրերում հաճախ էր շրջանառում շքեղության հարկի անհրաժեշտության մասին, հիմա, երբ նա եւ իր թիմը գերշքեղ պայմաններում են ապրում, մոռացել է շքեղ կյանքով ապրելակերպը հարկելու մասին:

Հշխանությունները «եկեղեցու բարենորոգում» անվան տակ ոչ միայն ցանկանում են, որ Վեհափառն իրենց կողմից ընտրված լինի, այլ նաեւ փորձում են Հայ առաքելական եկեղեցու գույքին «տիրանալ»: Բանն այն է, որ ՔՊ-ականները Հայ առաքելական եկեղեցու վերաբերյալ նոր նախագիծ են բերել Ազգային ժողով: Իշխանությունը որոշել է վերահսկել Հայ առաքելական սուրբ եկեղեցու հովանու տակ գտնվող սեփականությունը՝ ներկայացնելով օրենսդրական մի փոփոխություն, որը հիմնականում վերաբերում է եկեղեցապատկան հուշարձաններին: Նախագիծը հեղինակել են «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Թագուհի Ղազարյանն ու Սիսակ Գաբրիելյանը, որը կոչվում է «Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների եւ պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծ: Թագուհի Ղազարյանը նախագիծն ԱԺ ամբիոնից ներկայացնելիս հայտարարեց, որ հուշարձանների պետական ցանկերում ներառված պաշտամունքային կառույցները հնարավոր կլինի ցանկացած 3-րդ անձի՝ հատուցմամբ կամ անհատույց օտարել բացառապես ՀՀ կառավարության համաձայնությամբ:

Շարունակությունը՝ «ԱրմԼուր.էյէմ» կայքում:



Այժմ ունենք 1200-ից ավելի հետախուզման մեջ գտնվող տղաներ, որոնց 27 տարին լրացել է եւ չեն վերադառնում Հայաստան, քանի որ չունեն այլընտրանք. Հայաստան վերադառնալու դեպքում նրանք կդատապարտվեն: Այս մասին հայտարարել է պատգամավոր Հայկ Սարգսյանը ՀՀ ԱԺ հունվարի 19-ի հերթական նիստում՝ առաջին ընթերցմամբ ներկայացնելով ««««Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը: Պատգամավորի ներկայացրած օրենսդրական նախաձեռնությամբ մասնավորապես 27-37 տարեկան քաղաքացիները կարող են ազատվել քրեական պատասխանատվությունից՝ կամովին վերադառնալ Հայաստանի Հանրապետություն եւ ընտրել հինգ տարբերակներից մեկը: Հայկ Սարգսյանը պատասխանել է պատգամավորների հարցերին՝ ներկայացնելով պարզաբանումներ առաջարկվող կարգավորումների վերաբերյալ:

Մանրամասները՝ «ԱրմԼուր.էյէմ» կայքում:



ArmLur.am-ը գրել էր, որ մեր տեղեկությունների համաձայն՝ իրավապահները ՊԵԿ օպերլիազորներ են ձերբակալել կաշառք վերցնելու պահին: Ի պատասխան՝ Հակակոռուպցիոն կոմիտեն հաստատեց, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ գաղտնի քննչական գործողությունների արդյունքում՝ հանցավոր արարք կատարելուց անմիջապես հետո ձերբակալվել են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի երկու գլխավոր օպերլիազորներ: Վերջիններս մեղադրվում են տնտեսվարողի օգտին ապօրինի գործողության դիմաց նրանից առանձնապես խոշոր չափերի՝ 9 միլիոն ՀՀ դրամ կաշառք ստանալու մեջ:

Մանրամասները՝ «ԱրմԼուր.էյէմ» կայքում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԴԻՄԵԼ ԵՄ ԱԱԾ. ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Օրերս համացանցում տեսանյութի տեսքով տեղեկություն էր տարածվել, որ ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Հասմիկ Հակոբյանը եւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը մեծ գումարներ են երկրից դուրս բերում:

Տեսանյութում մասնավորապես ասվում է. «Պարզվել է, որ Սիմոնյանը եւ Հակոբյանը վերջին կես տարվա ընթացքում ակտիվորեն զարդեր են գնել եւ արտասահմանյան բանկերում հատուկ խցիկներ են բացել դրանք պահելու նպատակով: Հասմիկ Հակոբյանին տրված նվերների ցանկում են 35 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ Panthere De Cartier ժամացույց եւ մոտավորապես 600 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ Patek Philippe Aquanaut Luce Haute Joaillerie ժամացույց: Նաեւ Հակոբյանի անունով Շվեյցարական SYZ Bank-ում 300 հազար ԱՄՆ դոլար հաշիվ է բացվել»:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձել է այս տեղեկությունը ճշտել հենց պատգամավորից:

-Տիկին Հակոբյան, համացանցում Ձեր մասին տեղեկություններ են պտտվում, որ Շվեյցարական բանկում ունեք հաշիվներ, ավելին, արտասահմանյան բանկերում պահատուփեր եք բացել եւ թանկարժեք զարդեր եք պահում: Կմանրամասնե՞ք, տեսնենք՝ այս ինչ գումարների եւ զարդերի մասին է խոսքը:

-Իհարկե շատ կուզեի նման ճոխություններ ինձ թույլ տալ: Այդ բովանդակությանը մի 5-6 օր առաջ եմ ծանոթացել Tik Tok-ի հարթակում եւ դիմել եմ Ազգային անվտանգության ծառայություն: Այնպես որ, նորությունների դեպքում անպայման կտեղեկացնեմ նաեւ իմ հետեւորդներին եւ քաղաքացիներին, թե ինչ կոռուպցիոն սենսացիա է:

Ես սա իրականում էլի հիբրիդային հարձակման շրջանակում եմ դիտարկում, որովհետեւ տեսել եք, որ վերջերս տարբեր պաշտոնյաներին վերագրվում են տարբեր կոռուպցիոն սխեմաներ, հաշիվներ, թանկարժեք իրեր, դղյակներ տարբեր երկրներում: Հենց այդ պատճառով դիմել եմ ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն:

-Կարո՞ղ եք ասել՝ մասնավորապես ինչ եք նշել հաղորդման մեջ: Շվեյցարական բանկի մասին լուրե՞րն են սխալ, թե՞ զարդերի հատվածը:

-Ամեն ինչը: Ծայրից ծայր ինչ գրված է՝ սխալ է:

-Cartier ժամացույց չունե՞ք:

-Ո՛չ, չունեմ:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ խնամի-ծանոթ-բարեկամ սկզբունքը մերժող իշխանությունների հետ խորհրդարան եկած «Ա Թիվի» հեռուստաընկերության «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդման սցենարիստ-լրագրող Հասմիկ Հակոբյանը կարծես թե այս հեղափոխությունից հետո աստիճանաբար փորձում է կապիտալ կուտակել:

Համաձայն ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հասմիկ Հակոբյանի հայտարարագրի՝ պատգամավորը հայտարարագրել է 2019 թվականին ձեռք բերված բնակարան Երեւանի Նոր Նորք վարչական շրջանում: 2 տարի անց՝ 2021 թվականին, Հակոբյանը ձեռք է բերել HYUNDAI մակնիշի մեքենա 2015 թվականի արտադրության:

Նշենք, որ մինչեւ ՔՊ-ական դառնալը, Հասմիկ Հակոբյանը ոչինչ չունեցող գործավարուհի էր ՕԵԿ-ի նախագահ Արթուր Բաղդասարյանի կողմից հիմնադրված Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայում: Հետո մտել էր «Օրինաց երկիր» կուսակցությանը պատկանող մեդիալրատվադաշտ եւ ՕԵԿ-ի քարոզիչ էր աշխատում:

Բացի այս, Հակոբյանը պատգամավոր դառնալուց հետո իր մտերիմներից, բարեկամներից ԱԺ-ում աշխատանքի էր ընդունել հարազատ հորը՝ Արմեն Հակոբյանին:

2025 թվականի սեպտեմբերին կայացած ՔՊ վարչության անդամների ընտրությունների արդյունքով Հակոբյանն ընտրվել էր ՔՊ վարչության անդամ 434 ձայնով:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԶԵՆՔԻ ՀԱՄԱՐ ԿՌԻՎ Է ՏԱԼԻՍ

ՆԳՆ ոստիկանությունը վերջին շրջանում փուլ առ փուլ ուսումնասիրում է քաղաքացիներին պատկանող զենքերի փաստաթղթերը եւ անգամ օրինական հիմքով ձեռք բերված զենքերի դեպքում պահանջում է դրանք հանձնել կամ ենթարկում է տեխնիկական վնասման՝ օգտագործման համար անպիտան դարձնելու նպատակով: Այս գործընթացը վերաբերում է ոչ միայն շարքային քաղաքացիներին, այլեւ պետական բարձր պաշտոն զբաղեցրած անձանց:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախկին դատավոր, 2006-2011 թվականներին ՀՀ մարդու իրավունքների նախկին պաշտպան Արմեն Հարությունյանը դատի է տվել Ներքին գործերի նախարարությանը: Մեզ հայտնի դարձավ, որ Արմեն Հարությունյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ խնդրելով ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանությանը պարտավորեցնել ձեռնպահ մնալ Արմեն Հարությունյանին որպես պարգեւ տրված եւ վերջինիս սեփականության իրավունքով պատկանող «Կոլտ» 38 տեսակի, գործարանային SG 03960-E համարի զենքն առգրավելու եւ մալելու գործողություններից:

«Զենքի մասին» 1998 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-246 օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով զենքով պարգեւատրված անձինք մինչեւ 2025 թվականի հունիսի 1-ը պարտավոր են Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանություն ներկայացնել տվյալ անձի մոտ զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների եւ վիճակների բացակայությունը հավաստող բժշկական փաստաթղթեր եւ զենքի հետ կապված անվտանգության կանոնների իմացության տեսական եւ գործնական քննությունները հանձնելու մասին փաստաթուղթ: Սահմանված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում զենքը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանությունը մալում է եւ վերադարձնում տիրոջը:

Դատելով իրավիճակից՝ բոլոր նրանք, որոնք օրենքի այս կետերին չեն ենթարկվում կամ չեն համապատասխանում, նրանց պատկանող զենքերը առգրավվում են:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՊՈՒՏԻՆԸ ՀՐԱՎԵՐ Է ՍՏԱՑԵԼ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը Գազայի հարցով Խաղաղության խորհրդի կազմ մտնելու հրավեր է ստացել: Այս մասին տեղեկանում ենք «ՌԻԱ Նովոստի» գործակալությունից, որում հայտարարել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը: «Այո, իսկապես, նախագահ Պուտինը նույնպես դիվանագիտական ուղիներով հրավեր է ստացել՝ մտնելու Խաղաղության խորհրդի կազմ», - լրագրողներին ասել է Պեսկովը:

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն ավելի վաղ հայտարարել էր Գազայի հարցով Խաղաղության խորհուրդ ձեւավորելու մասին եւ խոստացել շուտով բացահայտել դրա մասնակիցների կազմը: Խորհրդի կազմում են ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն, Թրամփի հատուկ բանագնաց Սթիվ Ուիթքոֆը, ԱՄՆ ղեկավարի փեսա ու խորհրդական Ջարեդ Քուշները, Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Թոնի Բլերը, Համաշխարհային բանկի նախագահ Աջայ Բանգան եւ ԱՄՆ ազգային անվտանգության հարցերով խորհրդականի տեղակալ Ռոբերտ Գեբրիելը, հաղորդել է Սպիտակ տունը:

2025թ. նոյեմբերի կեսերին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հավանություն է տվել ԱՄՆ-ի կողմից առաջարկված բանաձեւին՝ հաջակցություն Թրամփի՝ Գազայի հատվածում իրադրության կարգավորման համապարփակ ծրագրի: Անվտանգության խորհրդի 15 անդամներից 13-ը քվեարկել են կողմ, իսկ ՌԴ-ն եւ Չինաստանը ձեռնպահ են մնացել: Գազայի հարցով Միացյալ Նահանգների պլանում առաջարկվել է Գազայի հատվածի ժամանակավոր միջազգային կառավարում եւ Թրամփի նախագահությամբ Խաղաղության խորհրդի ստեղծում, ինչպես նաեւ նախատեսվում է միջազգային կայունացնող ուժերի տեղակայում՝ Իսրայելի եւ Եգիպտոսի հետ համակարգմամբ: Առայժմ խաղաղապահ ուժերի կազմի վերաբերյալ տվյալներ չկան:

ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ, Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացում Հայաստանի հատուկ ներկայացուցիչ Ռուբեն Ռուբինյանը չի շտապում կանխատեսումներ կարգավորման գործընթացում հնարավոր զարգացումների վերաբերյալ:

Ազգային ժողովում լրագրողների հետ ճեպազրույցում Ռուբինյանն ասել է, որ հնարավոր զարգացումների վերաբերյալ ոչինչ չի ասի, քանի որ փորձը ցույց է տվել, որ ավելի լավ է սպասել զարգացումներին, եւ որեւէ բանի մասին հայտարարել, երբ դա արդեն տեղի կունենա:

«Ինչ վերաբերում է հետագա զարգացումներին, թույլ տվեք հիմա բան չասեմ, երբ որ ժամանակը գա, պատշաճ ձեւով կտեղեկացնեմ: Թույլ տվեք հիմա բան չասել, որովհետեւ ես ուզում եմ հայտնել որեւէ բան, երբ որ դա տեղի ունենա»,-ասել է Ռուբինյանը:

Անդրադառնալով երրորդ երկրների եւ դիվանագիտական անձնագրեր կրող անձանց համար Հայաստան-Թուրքիա սահմանի բացվելուն կամ գործընթացը դյուրացնելուն՝ Ռուբինյանը հիշեցրեց, որ դրա մասին պայմանավորվածություն կա դեռեւս 2022 թվականից:

«Միայն կարող եմ ասել այն, ինչը հրապարակային է, որ Թուրքիան վերականգնում է Ալիջանի անցակետը»,-ասաց Ռուբինյանը:

ԱԺ փոխնախագահը խոսել է նաեւ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ վերջերս արած հայտարարության մասին, որ Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացում 2026 թվականի սկզբին խորհրդանշական քայլեր են լինելու: «Չեմ ուզում այս թեմայով շատ բան ասել, ոչ թե որովհետեւ ինչ-որ թաքցնելու բան ունեմ կամ չեմ ուզում ձեզ ինֆորմացիա տալ, այլ Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացում իմ փորձը ցույց է տալիս, որ ավելի լավ է սպասել ինչ-որ բան լինի, այդ ժամանակ հայտարարել: Ես չեմ ուզում որեւէ կերպ գործընթացներին վնաս տալ»,-ասել է նա:

Ռուբինյանի խոսքով՝ հայկական կողմի դիրքորոշումը մշտապես եղել է այն, որ Երեւանը ուզում է ունենալ ամբողջապես բաց սահմաններ եւ հաստատված դիվանագիտական հարաբերություններ հենց վաղը, եւ այս առումով այդ դիրքորոշման մեջ բան չի փոխվել:

ՉԵՂԱՐԿԵԼ Է ԱՅՑԸ ԳԵՐՄԱՆԻԱ

Սիրիայի ժամանակավոր նախագահ Ահմեդ ալ-Շարաան չեղարկել է հունվարի 19-20-ը Գերմանիա կատարելիք այցը՝ իր երկրում տիրող ներքաղաքական իրավիճակով պայմանավորված: Այս մասին հաղորդել է NTV-ն՝ հղում անելով Գերմանիայի կառավարության խոսնակին:

Հունվարի 20-ին ալ-Շարաան պետք է բանակցություններ վարեր Գերմանիայի նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի եւ կանցլեր Ֆրիդրիխ Մերցի հետ, ինչպես նաեւ հանդիպում ունենար գերմանական բիզնեսի ներկայացուցիչների հետ:

Այցի չեղարկման պատճառ է նշվում Սիրիայում ստեղծված իրավիճակը, մասնավորապես կառավարական ուժերի եւ քրդերի գլխավորած «Սիրիայի դեմոկրատական ուժերի» միջեւ կատաղի մարտերը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը հունվարի 19-ին պաշտպանության եւ անվտանգության խորհրդի նիստ է հրավիրել՝ քննարկելու Գրենլանդիայի շուրջ ստեղծված իրավիճակը եւ մի շարք այլ միջազգային հարցեր: Այս մասին հաղորդել է BFMTV հեռուստաալիքը:

Նշվում է, որ բացի Գրենլանդիայից՝ կքննարկվի նաեւ իրադրությունը Սիրիայում եւ Իրանում:

Գրենլանդիան մտնում է Դանիայի Թագավորության կազմի մեջ: Սակայն ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը բազմիցս հայտարարել է, որ կղզին պետք է դառնա ԱՄՆ-ի մաս: Դանիան եւ Գրենլանդիան դեմ են արտահայտվել դրան, իսկ եվրոպական երկրներն իրենց համերաշխությունն են հայտնել Դանիային:

ՆԱՏՕ-ի գծով մի շարք եվրոպական գործընկեր երկրներ իրենց զինվորականներին ուղարկել են Գրենլանդիա՝ զորավարժությունների մասնակցելու:

Թրամփն ավելի վաղ հայտարարել էր փետրվարից Դանիայի, Նորվեգիայի, Շվեդիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Նիդեռլանդների եւ Ֆինլանդիայի դեմ 10% մաքսատուրք սահմանելու մասին, որը հետագայում կբարձրանա մինչեւ 25% եւ կգործի մինչեւ ԱՄՆ-ի կողմից Գրենլանդիան գնելու գործարքի կնքումը:

Թրամփը նաեւ հաղորդագրություն է ուղարկել Նորվեգիայի վարչապետ Յոնաս Գահր Ստյորեին՝ նշելով, որ Նոբելյան մրցանակ չստանալուց հետո այլեւս պարտավոր չէ մտածել խաղաղության մասին:

ՎԵՆԵՍՈՒԵԼԱՆ ԿԱՄՐԱՊՆԴԻ

Վենեսուելայի նախագահի պաշտոնակատար Դելսի Ռոդրիգեսը հաստատել է նավթագազային արդյունաբերության հետագա զարգացման ծրագրերը եւ կրկին միասնության կոչ է արել:

«Հաշվի առնելով հասարակության շահերը՝ մենք կամրապնդենք նավթագազային արդյունաբերությունը՝ պատասխանատու կերպով տնօրինելով եւ տնտեսելով արժութային պահուստները»,-այս մասին նշել է Ռոդրիգեսը Telegram-ի իր ալիքում: Նա ընդգծել է երկրի տնտեսական աճի համար «ազգային արտադրության խթանման» եւ ներմուծման ռացիոնալ օգտագործման անհրաժեշտությունը:

«Այս փուլը մեզնից պահանջում է միասնություն»,-նշել է Ռոդրիգեսը: Նա ընդգծել է, որ Վենեսուելան ունի անհրաժեշտ պաշարներ իր ժողովրդի բարեկեցության ապահովման համար:

Հունվարի 2-ին ԱՄՆ-ի զինվորականները Կարակասում ձերբակալեցին Վենեսուելայի նախագահ Նիկոլաս Մադուրոյին ու կնոջը եւ նրանց տարան Միացյալ Նահանգներ: ԱՄՆ-ի իշխանությունները զույգին մեղադրում են թմրավաճառությանը մասնակցելու, ԱՄՆ ապօրինի թմրանյութ տեղափոխելու մեջ: Վենեսուելայի փոխնախագահ Դելսի Ռոդրիգեսը հունվարի 5-ին երդում է տվել որպես պետության ղեկավարի պաշտոնակատար:

Մադուրոն արդեն իսկ կանգնել է Մանհեթենի դաշնային դատարանի առջեւ, որտեղ հերքել է իրեն ներկայացված բոլոր մեղադրանքները:

ԻՆՉ Է ԿՈՒՏԱԿԵԼ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԱՆԵՐՈՐԴՈՒ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտն ավարտած, աղա Նիկոլ Փաշինյանի պայքարի ջատագովը դարձած Հրաչյա Հակոբյանը 8 տարի եղել է «Հայկական Ժամանակ» օրաթերթի տպագրության պատասխանատուն: 2003-2008 թվականներին եղել է Երեւանի խամաճիկների պետական թատրոնի, աղա 2009-2010թթ. Երեւանի պետական կամերային երաժշտական թատրոնի դերասան:

Մինչ հեղափոխությունը նկարահանվել է մի շարք գեղարվեստական ֆիլմերում:

2018 թվականին «Ելք»-ից մինչեւ «Քաղաքացիական պայմանագիր» աներեր կանգնել է Նիկոլ Փաշինյանի կողքին:

Այս թեժ քաղաքական պայքարից հետո, սակայն, ՀՀ «թիվ մեկ աներորդին» 2026 թվականի ընտրություններում չի լինի քրոջ եւ փեսայի կողքին:

Ի՞նչ ունեցվածք է կուտակել այս տարիներին Հրաչյա Հակոբյանը:

ArmLur.am-ը ուսումնասիրել է Հրաչյա Հակոբյանի հայտարարագրված, այդպես ասած՝ երեւացող ունեցվածքը: Եւ այսպես, համաձայն պատգամավորի 2024 թվականի տարեկան հայտարարագրի՝ տարեսկզբին նա ունեցել է 7 անշարժ գույք՝ 2 բնակարան, 2 անհատական բնակելի տուն, 3 հողամաս:

Երկու անհատական բնակելի տները եւ 1 հողամասը ձեռք է բերվել 2020 եւ 2021 թվականներին Ջրվեժում՝ Զորաղբյուրում:

2024 թվականին եւս մեկ բնակարան Հակոբյանը գնել է կրկին Ջրվեժում 44 մլն 120 հազար դրամով «Կապիտալ Բիլդ» կառուցապատողից:

Փաստացի հեղափոխությունից հետո Հրաչյա Հակոբյանը ձեռք է բերել 3 տուն՝ 3 տարում: Իսկ այժմ ընդհանուր առմամբ նա ունի 5 տուն:

Հրաչյա Հակոբյանը հայտարարագրել է Volvo մակնիշի 2021 թվականի արտադրության մեքենա, որը ձեռք է բերել 2023 թվականին 18 մլն դրամով:

Հակոբյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 2,1 մլն դրամ եւ 2 հազար եվրո, սակայն տարեսկզբին առկա 11,6 հազար ԱՄՆ դոլարը տարեվերջին զրոյացել է:

Կանխիկ դրամական միջոցներն ավելացել են՝ 2,5 մլն դրամից դառնալով 3 մլն դրամ:

Հակոբյանի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 13 մլն 527 հազար դրամ, որից 9 մլն 960 հազար դրամն աշխատանքի վարձատրություն է ԱԺ աշխատակազմից, իսկ 2,5 մլն դրամը վարձակալության դիմաց ստացված եկամուտ է, 1 մլն 67 հազար դրամը եկամտահարկի վերադարձ է ՀՀ Ֆինանսների նախարարությունից:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 39 մլն 700 հազար դրամ, որը բնակարանի հիփոթեկի մայր գումարի մնացորդն է:

Հակոբյանը վարկերի մարմանը մեկ տարում հատկացրել է 5 մլն 359 հազար դրամ, անշարժ գույքի վերանորոգմանը՝ 3 մլն դրամ:

Տեղեկացնենք, որ Աննա Հակոբյանի եղբայրը «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցության Շենգավիթ տարածքային կառույցի խորհրդի անդամ է»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀՐԱՎԻՐԵԼ ԵՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

Նախկին ոստիկանապետ Վալերիյ Օսիպյանն ու կինը՝ Լուսինե Թադեւոսյանը, 2026թ. հունվարի 19-ին հրավիրվել են Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն: Նրանց պատկանող գույքի առնչությամբ իրականացվել է ուսումնասիրության: Դատախազությունն են հրավիրվում գործի նյութերին ծանոթանալու, դիրքորոշում ներկայացնելու համար:

2018թ. իշխանափոխությունից հետո Վալերիյ Օսիպյանը նույն տարվա մայիսի 10-ին նշանակվեց ոստիկանության պետի պաշտոնում: Այնուհետեվ վարչապետի 2019թ. սեպտեմբերի 18-ի որոշմամբ՝ Վալերիյ Օսիպյանը նշանակվեց վարչապետի գլխավոր խորհրդական: Օրեր անց՝ հոկտեմբերի 7-ին, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Վալերիյ Օսիպյանն ազատվեց վարչապետի գլխավոր խորհրդականի պաշտոնից:

Նշենք, որ այս փուլում Գլխավոր դատախազությունը չի հանրայնացնում, թե ինչ գույքերի առնչությամբ է իրականացրել ուսումնասիրություն: Պատճառն այն է, որ գործի նյութերին ծանոթանալուց հետո շահագրգիռ անձինք կարող են ներկայացնել ապացույցներ, միջնորդություններ եւ ենթադրաբար բռնագանձման ենթակա գույքի ցանկում կարող է կատարվել փոփոխություն:

ՎԱՀԱԳՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ՝ TRIPP–Ի ՄԱՍԻՆ

Լինելու են «ֆրոնտ օֆիս» եւ «բեք օֆիս». որպես այդպիսին՝ այդ «ֆրոնտ օֆիսում» կարող է ընդհանրապես մարդ նստած չլինի՝ լինի սկաներ: Այս մասին, երեկ՝ հունվարի 19-ին, ԱԺ-ում լրագրողների հետ ճեպազրույցում նշեց պատգամավոր Վահագն Ալեքսանյանը՝ անդրադառնալով TRIPP-ի շրջանակներում կիրառվելիք կարգավորումներին:

«Ամերիկայում սրա մասին խոսում էինք, վերջերս գործուղման էինք ՆԱՏՕ ԽՎ մեր պատվիրակությամբ: Այնտեղ՝ օդանավակայաններից մեկում, ուղղակի մոտեցնում ես քո անձը հաստատող փաստաթուղթը, ինքը սկանավորում է դա, հետո սկանավորում է քո դեմքը, ու այդ գործառույթը, որ պետք է մարդն իրականացնի, այդ մի սարքն իրականացնում է:

Մյուսը՝ բեռների սկանավորումը, ամբողջ աշխարհում շատ ընդունված բան է, որ բեռները սկանավորում են սարքերի միջոցով: Կարող է եւ այդպիսի տարբերակ լինի. առանց ազգության ռոբոտներ ու մեքենաներ լինեն այդ տարածքում: Դա կրիտիկական խնդիր չէ, ընդհակառակը՝ դա առաջընթաց է, որին պետք է գնալ եւ ոչ թե որից պետք է խուսափել»,-նշեց նա:

Հիշեցնենք, որ «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» (ԹՐԻՓՓ) ծրագրի համար Հայաստան-ԱՄՆ կենսագործման շրջանակի հրապարակման վերաբերյալ համատեղ հայտարարության Սահմանային անվտանգության եւ մաքսային հսկողության հիմնարար սկզբունքներում նշվում է, որ ակնկալվում է, որ սահմանային եւ մաքսային բոլոր գործունեությունները կիրականացվեն սահմանային կառավարման միջազգայնորեն ճանաչված չափանիշներին համապատասխան՝ պահպանելով օգոստոսի 8-ի հռչակագրի սկզբունքները՝ օգտագործելով «ֆրոնտ օֆիս - բեք օֆիս» (ընդունարան - գրասենյակ) գործառնական մոդելը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԽՐԱՄԱՏՈՒՄ ԶԻՆՎՈՐԻ ՄԱՀՎԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Հունվարի 14-ին Վարդենիսի խրամատում մահացած հայտնաբերված զինվոր Վահան Պետրոսյանի հասցեին տեւական ժամանակ հայհոյանքներ են հնչել:

Մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ զինվորի հասցեին հայհոյանքները հնչել են դիրքում չքնելու, խրամատը մաքրելու հարցի շուրջ, որից հետո 6 ամսվա զինծառայողին գտել են ինքնասպան եղած:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ հունվարի 14-ին Վարդենիսի խրամատում մահացած հայտնաբերված զինվորը Ուրարտու ֆուտբոլային ակումբի սան Վահան Պետրոյանն է:

Վահանը իր ֆուտբոլային քայլերը սկսել է 6 տարեկանից «Ուրարտու» ակադեմիայի մանկապատանեկան թիմերում, այնուհետեւ հանդես է եկել «Ուրարտու-2»-ի կազմում:

Պաշտպանության նախարարությունը հունվարի 14-ին էր հայտնել, որ հայտնաբերվել է զինծառայող Պետրոսյանի դին՝ հրազենային վնասվածքով:

Ավելի ուշ քննչական կոմիտեն հայտնեց, որ զինվորին ինքնասպանության են հասցրել եւ քրեական վարույթով կա մեկ ձերբակալված:

Հիշեցնենք, որ զինծառայողի մահվան դեպքի առթիվ 2026 թվականի հունվարի 14-ին նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում մեկ անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով (զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը): Այս մասին հայտնում է Քննչական կոմիտեն:

Վերջինս ձերբակալվել էր: Նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան:

Հայտնել էինք, որ զինվորին մահացած գտել են Վարդենիսում, մարտական հերթապահության ժամանակ, նա եղել է խրամատում: Վերջինս մոտ 6 ամսվա զինծառայող էր: 2025 թվականի ամառն էր զորակոչվել բանակ:

ՔՆՆՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՊՕՐԻՆԻ ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

Քրեական ոստիկանության Արագածոտնի մարզային վարչությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ Աշտարակ քաղաքի 43-ամյա բնակիչը կեղծ օղիներ է ձեռք բերում եւ վաճառում: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ նա կեղծ օղիները ձեռք է բերել Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղի 23-ամյա եւ 48-ամյա երկու բնակիչներից: Պարզվել է նաեւ, որ Նորխարբերդցի հայր եւ որդին տեւական ժամանակ գյուղի 10-րդ փողոցի 1-ին նրբանցքի հասցեներից մեկում իրականացնում են կեղծ խմիչքների շշալցում եւ իրացնում:

Հունվարի 14-ին 43-ամյա աշտարակցին հայտնաբերվել, ձերբակալվել եւ իր վարած «Միցուբիշի» մեքենայով հանդերձ՝ տեղափոխվել է քրեական ոստիկանության Արագածոտնի մարզային վարչություն, որտեղ պարզվել է, որ մեքենայում կան տարբեր տեսակի կեղծ օղիներ, ինչն իրացնելու նպատակով ձեռք էր բերել Նոր Խարբերդ գյուղի բնակիչներից:

Հետագա միջոցառումների արդյունքում Մասիս քաղաքի Հերացու փողոցում հայտնաբերվել, ձերբակալվել եւ մարզային վարչություն են տեղափոխվել նաեւ Նոր Խարբերդի բնակիչները: Բացատրական աշխատանքի արդյունքում 23-ամյա երիտասարդը հայտնել է, որ զբաղվում են կեղծ օղիների շշալցմամբ եւ իրացմամբ:

Ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղվող տղամարդիկ կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել են նախաքննական մարմին:

Նախաձեռնվել է քրեական վարույթ:

Աշտարակի բնակիչ 43-ամյա տղամարդու «Միցուբիշի» մակնիշի մեքենայի զննությամբ հայտնաբերվել են 114 շիշ տարբեր տեսակի օղիներ, իսկ նրա բնակության հասցեում՝ 168 շիշ օղի:

Նախաքննությունը շարունակվում է:

ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔ

Սամվել Կարապետյանն ԱԱԾ մեկուսարանից տեղափոխվել է տուն:

«Սամվել Կարապետյանի նկատմամբ կրկին կիրառվեց տնային կալանքը համակցված գրավով եւ երկրից բացակայելու արգելքով»,- հայտարարել է փաստաբան Արամ Վարդեւանյանը:

Նա նշել է, որ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի որոշումը ենթադրում էր կրկին կալանքի ռեժիմ եւ 14 ժամ տեւողությամբ դատական նիստը՝ դատավոր Դոլմազյանի գլխավորությամբ, կրկին հանգեցրեց նրան, որ տնային կալանքը կիրառվեց որպես խափանման միջոց:

«Իհարկե նաեւ այն սահմանափակումները, որոնք կիրառվել էին հրապարակային խոսքի առումով, վերացվել են: Հայաստանի Հանրապետությունում ունենք մարդասիրության ճգնաժամ, երբ Սամվել Կարապետյանը գտնվում էր հիվանդասենյակում, եւ այդ պայմաններում ոստիկանները գալիս են եւ ներերակային ներարկումն ընդհատում: Սամվել Կարապետյանը, երբ տեսավ ոստիկաններին հիվանդասենյակից, անջատեց համապատասխան սարքը եւ ասաց՝ գնացինք»,- ասել է փաստաբանը:

Նա նշել է, որ 53 քննիչից բաղկացած քննչական խումբը դարձել է 23:

ԼՈՒՐԵՐ

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԴԵՊՔ

Երեկ՝ հունվարի 19-ին, ողբերգական դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 03:30-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մաշտոցի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Դավթաշենի կամրջի տակ դի կա:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, դեպքի վայր է ժամանել ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մաշտոցի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Դավիթ Ավագյանի, բաժնի պետի տեղակալ Գեւորգ Պողոսյանի գլխավորությամբ: Ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 1-ին գումարտակի 2-րդ վաշտի պարեկները՝ գումարտակի հրամանատար Գոռ Առաքելյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Դավիթ Նիկողոսյանի գլխավորությամբ: Տարածքը սահմանազատել են նույն վաշտի ավագ պարեկ Դավիթ Մովսիսյանն ու պարեկ Ջոհրաբ Պետրոսյանը: Տեղում պարզվել է, որ ստացված օպերատիվ տեղեկությունը հավաստի է, եւ կամրջի տակ հայտնաբերվել է անձը չպարզված տղամարդու մարմին:

Դեպքի մասին ոստիկանության Մաշտոցի բաժնից տեղեկությունը փոխանցել են ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը բաժնի պետ Էդգար Բալոյանի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Տեղի ունեցածը ինքնասպանություն է, թե դժբախտ պատահար՝ պարզվում է: Ոստիկանությունն ու քննչական բաժինը պարզում են մահացածի ինքնությունը:

ԹՄՐԱՄԻՋՈՑ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Համայնքային ոստիկանության Մասիսի բաժնի ծառայողները հունվարի 14-ին օպերատիվ տեղեկություն էին ստացել, որ Սիս գյուղի 52-ամյա բնակիչը տանը թմրամիջոց է պահում:

Սիս մեկնած համայնքային ոստիկանները 52-ամյա տղամարդու տան հյուրասենյակի ակնհայտ տեսանելի հատվածում նկատել են կանեփանման զանգված: Տղամարդը ձերբակալվել եւ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Մասիսի բաժին:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են նախաքննական մարմին:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵՑ

Հունվարի 15-ի առավոտյան Զառիթափ գյուղում ձերբակալվեց Գետափ գյուղի բնակիչ 34-ամյա տղամարդ: Անցած տարվա սեպտեմբերից նա հետախուզվում էր ծանր մարմնական վնաս պատճառելու մեղադրանքով, խափանման միջոցը՝ կալանք:

Հետախուզվողի վերաբերյալ ստացված օպերատիվ տեղեկությունը Համայնքային ոստիկանության Եղեգնաձորի բաժնի ծառայողներն իրացրին Վայքի գործընկերների հետ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 15-16-ը բացահայտվել է 123 հանցագործություն, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՐՏԱԳԱՂԹԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Ամանորը դիմավորել եմ հայրենի, Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեվան գյուղում, Ոսկեվանում, ինչպես նաեւ՝ սահմանամերձ շատ բնակավայրերում ամանորին նախկին տարիների շարժը չկար: Գյուղերից շատ ընտանիքներ տեղափոխվել են արտերկիր, շատերն էլ հիպոթեկով Երեւանում բնակարաններ են գնել, տեղափոխվել մայրաքաղաք: Վերջին տարիներին գյուղերում սուբվենցիոն ծրագրեր են իրականացվել,ճանապարհներ են կառուցապատվել, սակայն Տավուշի գյուղերի մեծ մասում գյուղատնտեսությամբ զբաղվելը լոկ գոյության խնդիր է լուծում, եկամտաբեր աշխատանք ունենալու համար գյուղացիները տեղափոխվում են Երեւան կամ արտերկիր: Կառավարությունը պետք է խրախուսեր, աջակցեր գյուղերում փոքր արտադրությունների հիմնելուն, սակայն անցած յոթուկես տարում այդ ուղղությամբ գործ չի արել: Գյուղերից արտագաղթը չի դադարել, բնակչության աճ չկա: Գյուղերում շատ են միայնակ ծերերով տները, բնակչության աճ չկա նաեւ այն պատճառով, որ հարյուրավոր երիտասարդներ, ում տարիքն անցել է 30-ը, ամուսնացած չեն ոչ միայն այն պատճառով, որ իրենց կյանքի ընկեր չեն կարողանում գտնել, այլ նաեւ այն պատճառով, որ տուն պահելու համար եկամտաբեր աշխատանք չունեն, չեն հավատում խաղաղության դարաշրջանի բացմանը, Հայաստան երկրի ապագային: Խառը ժամանակներում չամուսնացածի միայնակ գլուխը պահելն ավելի դյուրին է: Մյուս կողմից էլ սոցիալական, ֆինանսական խնդիրները պատճառ են դառնում ամուսնալուծությունների համար: «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգը հեղեղված է Տավուշի մարզի համայնքներում ամուսնալուծություններին առնչվող քաղաքացիական հայցերով:

ԸՆԴԱՄԵՆԸ 1989 ՀԵԿՏԱՐ

2025թ. դեկտեմբերի 25-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ կատարել, թե Տավուշի մարզի համայնքներում որքան հեկտար աշնանացան է արվել: Տավուշի մարզպետարանից պատասխանել են. «2025 թվականին Տավուշի մարզում կատարվել է աշնանացան՝ Բերդ 932.4 հա, Նոյեմբերյան 748.6 հա, Իջեւան 308 հա, ընդամենը մարզում՝ 1989 հա»: Դիլիջան համայնքի 6 գյուղերում, նախկին տարիների նման, աշնանացան ցորեն չի ցանվել: Այժմ գործում է աշնանացան ցորենի մշակության աջակցության պետական ծրագիր, ցանված յուրաքանչյուր հեկտար ցորենի համար պետբյուջեից մշակողին տրվում է 80 հազար դրամ աջակցություն, սակայն այդ աջակցությունը բավարար չէ, որպեսզի գյուղացիները ցորեն ցանեն, մշակեն տարիներ շարունակ անմշակ մնացած իրենց հողերը: Վառելիքի, վարուցանքի, արտհունձի գները գյուղացիների համար թանկ են: Ցանքերը պարարտանյութերով չպարարտացնելու, վնասատուների դեմ քիմիական պայքար չիրականացնելու, արտերը չոռոգելու պատճառով ցորենի ցածր բերք է ստացվում, ինչը անարդյունավետ է դարձնում աշնանացան ցորենի մշակությունը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ՈՐՈՇՈՒՄ Մ. ՊՈՂՈՍՅԱՆԻ ՔԵՌՈՒ ՈՐԴՈՒ ԴԵՄ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՔՐԳՈՐԾՈՎ

«ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հակակոռուպցիոն կոմիտեն որոշում է կայացրել ԴԱՀԿ նախկին պետ Միհրան Պողոսյանի եղբոր (քեռու որդին)՝ «Միկշին»-ի սեփականատեր Տիգրան Հարությունյանի եւ նրա մյուս հարազատների դեմ հարուցված քրեական գործով:

Մասնավորապես քրեական վարույթով նախաքննության ավարտ է հայտարարվել ու գործը ուղարկվել է Հակակոռուպցիոն դատարան ու այն մակագրվել է Երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի դեմ հարուցված քրեական գործը քննող դատավոր Սարգիս Պետրոսյանին:

Դեռեւս 2025 թվականի դեկտեմբերի 9-ին հայտնել էինք, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ՀՀ նախկին գլխավոր հարկադիր կատարողի վերաբերյալ քննվող քրեական վարույթով հանրային քրեական հետապնդումներ են հարուցվել նրա ազգականների նկատմամբ:

Վերջիններս մեղադրվում են պաշտոնական լիազորությունների չարաշահմանն օժանդակելու, ինչպես նաեւ խոշոր եւ առանձնապես խոշոր չափերով վատնմանն օժանդակելու համար:

Եվ ահա հետախուզման մեջ գտնվող ԴԱՀԿ նախկին պետի քեռու որդուն՝ Տիգրան Միխաիլի Հարությունյանին, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա միջոցներ տրամադրելով եւ խոչընդոտները վերացնելով, 2009 թվականի մարտի 2-ից մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 16-ն ընկած ժամանակահատվածում օժանդակել է Հայաստանի Հանրապետության գլխավոր հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցրած, մշտապես իշխանության ներկայացուցչի գործառույթներով օժտված պետական ծառայություն իրականացնող պաշտոնական դիրքն օգտագործելով վատնման եղանակով ուրիշի խոշոր չափերով գույքի հափշտակություն կատարելուն:

Միհրան Պողոսյանի մյուս քեռու որդուն՝ Գեւորգ Միխաիլի Հարությունյանին, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա միջոցներ տրամադրելով եւ խոչընդոտները վերացնելով, 2012 թվականի հուլիսի 4-ից մինչեվ 2016 թվականի ապրիլի 22-ն ընկած ժամանակահատվածում օժանդակել է Հայաստանի Հանրապետության գլխավոր հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցրած, մշտապես իշխանության ներկայացուցչի գործառույթներով օժտված պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձ Միհրան Պողոսյանի կողմից պաշտոնական դիրքն օգտագործելով վատնման եղանակով ուրիշի առանձնապես խոշոր չափերով գույքի հափշտակություն կատարելուն:

Էդուարդ Կամոյի Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա միջոցներ տրամադրելով եւ խոչընդոտներ վերացնելով, օժանդակել է պաշտոնատար անձ Միհրան Պողոսյանի կողմից պաշտոնական լիազորությունները չարաշահելուն, որն անզգուշությամբ ծանր հետեւանքներ է առաջացրել»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՁԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՄԵԽԱՆԻԶՄ

Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը խորհրդարանի քննարկմանը ներկայացրեց «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:

ԿԳՄՍ նախարարը, ներկայացնելով նախագիծը, նշեց, որ այն հերթական քայլն է Հայաստանում մարդկային կապիտալի զարգացման եւ այդ կապիտալը երկրի տնտեսական ու հանրային զարգացմանը ի շահ գործադրելու ուղղությամբ:

Նախարարը մանրամասնեց, որ 2018 թվականից ներդրվել է պարտադիր ժամկետային զինծառայությունից տարկետման հատուկ կարգ, որով տարկետման իրավունք են ստանում այն քաղաքացիները, որոնք սովորում են Շանհայի վարկանիշավորման առաջին 50 տեղերում գտնվող բուհերից որեւէ մեկում:

«Մենք այսօր ունենք ավելի քան 600 քաղաքացիներ, որոնք օգտվել են տարկետման իրավունքից, եւ նրանցից 570-ը դեռեւս շարունակում են իրենց ուսումնառությունը: Միեւնույն ժամանակ, ուսումնասիրելով այն տեղեկատվությունը, թե ինչ է տեղի ունենում այն քաղաքացիների հետ, որոնք արդեն իսկ ավարտել են իրենց ուսումնառությունը, մենք տեսնում ենք, որ իրականում այն կապիտալը, որը զարգանում է, այսինքն՝ այդ հեղինակավոր բուհերում ուսումնառության արդյունքում ձեւավորող գիտելիքն ու հմտությունները չեն վերադառնում Հայաստանի Հանրապետություն եւ չեն ծառայում այստեղ ո՛չ հանրային, ո՛չ տնտեսական զարգացման օրակարգին: Եւ, քննարկելով ու նաեւ ուսումնասիրելով պատճառները, առաջարկվել է օրենսդրական այս փոփոխությունը, որով տարկետում ստացած եւ իրենց ուսումնառությունն այս բուհերում իրականացնող քաղաքացիները հնարավորություն են ստանալու ուսումն ավարտելուց հետո առնվազն երեք տարի Կառավարության կողմից սահմանված ոլորտում Հայաստանի Հանրապետությունում աշխատելու համար եւ դրանից հետո կարող են ազատվել զինվորական ծառայությունից: Այս կարգավորման հիմքում դրված է մի պարզ տրամաբանություն, որ այն քաղաքացիները, որոնք իրենց սեփական միջոցներով հաղթահարելով համապատասխան խոչընդոտները, արդեն իսկ ուսումնառության հնարավորություն են ստացել աշխարհի հեղինակավոր բուհերում, այնուհետեվ ունենան բավարար մոտիվացիոն գործիքակազմ՝ վերադառնալու եւ իրենց գիտելիքներն ու հմտությունները մեր երկրին ի նպաստ ծառայեցնելու: Մենք այսպիսով մի կողմից կապահովենք, որ նրանց վերադարձն անպայման տեղի ունենա, մյուս կողմից Կառավարության ենթաօրենսդրական ակտերի շրջանակներում տրված կարգավորումներով կուղղորդենք նրանց գիտելիքների ու հմտությունների կիրառումը հենց այն ոլորտներում, որտեղ այդ կարիքն իսկապես ունենք»,- ասաց Անդրեասյանը:

Նրա խոսքով՝ նախնական քննարկումները ցույց են տվել, որ օրենսդրական առաջարկվող կարգավորումը շատ սպասված է, այն իրականում կարող է լինել մեծ քանակությամբ բարձրակարգ մասնագետների ներգրավման հնարավորություն:

● *Անցած 3 օրում գրանցվել է 14 ավտովթար, 18 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԱՏՈՄԱԿԱՅԱՆԻ ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ ՀԵՏԱՁԳՎԵԼ Է

Ճապոնիայի Նիիգատա պրեֆեկտուրայում գտնվող աշխարհի ամենամեծ՝ Կաշիվազակի-Կարիվա ատոմակայանի 6-րդ ռեակտորի՝հունվարի 20-ին նախատեսված վերագործարկումը հետաձգվել է ազդանշանային համակարգի անսարքության պատճառով: Այս մասին հաղորդում է Kyodo լրատվական գործակալությունը՝ հղում անելով աղբյուրներին:

Մասնագետներն անցկացնում են անհրաժեշտ ստուգումները, բայց դա կտեւի մի քանի օր: Հետեւաբար, որոշում է կայացվել հետաձգել նախատեսված վերագործարկումը: Նոր ամսաթիվը դեռեւս չի հայտարարվել:

Ավելի վաղ տեղական իշխանությունները պաշտոնապես հաստատել էին Կաշիվազակի-Կարիվա ատոմակայանի երկու ռեակտորների վերագործարկումը: Ատոմակայանն ունի յոթ ռեակտոր՝8.2 ԳՎտ ընդհանուր հզորությամբ, ինչը այն դարձնում է աշխարհի ամենամեծը: Սակայն բոլոր էներգաբլոկները փակվեցին 2012 թվականին:

Մինչեւ 2011 թվականի գարունը Ճապոնիայում գործում էր 54 միջուկային ռեակտոր, որոնք արտադրում էին երկրի էլեկտրաէներգիայի մեկ երրորդը: Ֆուկուսիմայի ատոմակայանում տեղի ունեցած վթարից հետո դրանք բոլորը փակվեցին: Ներկայում երկրում մասնակիորեն վերագործարկվում են միջուկային էլեկտրակայանները՝ նոր, ուժեղացված անվտանգության միջոցառումների ձեռնարկմամբ:

Այս պահին Ճապոնիայում գործում է 14 ռեակտոր, եւ այս թիվը աստիճանաբար աճում է:

ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՀԱԿԱԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Իսրայելական ուժերը հունվարի 19-ի գիշերը Արեւմտյան ափի Հեբրոն քաղաքում լայնածավալ հակաահաբեկչական գործողություն են մեկնարկել: Այս մասին նշվում է Իսրայելի պաշտպանության բանակի (ԻՊԲ) եւ Իսրայելի անվտանգության ծառայության (Շին Բեթ) համատեղ հայտարարության մեջ:

«Հեբրոնի Ջաբալ Ջոհար թաղամասում իրականացվող գործողությունը նպատակ ունի խափանել ահաբեկչական ենթակառուցվածքները, վերացնել անօրինական զենքի տիրապետումը եւ ամրապնդել տարածքում անվտանգությունը»,-նշվել է հայտարարության մեջ:

Գործողությունը կշարունակվի մի քանի օր:

Ընդգծվել է նաեւ, որ Իսրայելի անվտանգության ուժերը «կշարունակեն աշխատել Արեւմտյան ափին ահաբեկչությունը ճնշելու համար»:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Беларус-82.1 մակնիշի գյուղատնտեսական մեքենայի (трактор) տեխնիկական անձնագիրը
Պետ.համարանիշ 05-68 UP
Տեխ.անձնագիր 054956
Գրիգորյան Արմեն 098 20 21 79

ԱՐԴՇԻՆԲԱՆԿ

ԱՐԴՇԻՆԲԱՆԿԸ ԹՈՂԱՐԿԵԼ Է 600 ՄԼՆ ԴՈԼԱՐԻ ԵՎՐՈՊԱՐՏԱՏՈՄՄԵՐ

Նախորդ շաբաթ՝ հունվարի 14-ին, Արդշինբանկը թողարկեց աննախադեպ ծավալի՝ 600 մլն ԱՄՆ դոլարի եվրոդարտատոմսեր, մարման ժամկետը՝ 5 տարի, եկամտաբերությունը՝ 6,6%: Հայաստանի ֆինանսական ոլորտի համար սա չափազանց կարեւոր իրադարձություն է: Թողարկված եվրոդարտատոմսերի պահանջարկը եղել է 2.1 մլրդ դոլարից ավելի:

Արդշինբանկի իրականացրած գործարքի ծավալն աննախադեպ է Հայաստանի համար, քանի որ մինչ այժմ չի եղել որեւէ մասնավոր կառույց, որն այդ ծավալի միջոցներ ներգրավի ու մի գործարքով նման ծավալի օտարերկրյա ներդրումային հոսք ապահովի երկիր: Պարտատոմսերի թողարկման ժամանակ պահանջարկը գերազանցել է 2.1 մլրդ դոլարը: Սա եւս մեկ անգամ վկայում է, որ բանկի թափանցիկության աստիճանը, ռիսկերի մակարդակն ու բիզնես վարելու ռազմավարությունն ընդունելի են միջազգային ներդրողների համար ու համապատասխանում են միջազգայնորեն ընդունելի բոլոր ստանդարտներին:

Նոր՝ 5 տարվա երկարաժամկետ ֆինանսական միջոցների ներգրավումն Արդշինբանկին հնարավորություն է տալիս մատչելի պայմաններով երկարաժամկետ ներդրումային միջոցներ առաջարկել ոչ միայն Հայաստանի տնտեսության առանցքային ընկերություններ հանդիսացող հաճախորդներին, այլեւ բնակչությանը:

Մեկնաբանելով իրադարձությունը՝ Արդշինբանկի վարչության նախագահ Արտակ Անանյանը նշում է. «Սա Արդշինբանկի եվրոպարտատոմսերի չորրորդ թողարկումն է, եւ այն դարձել է ամենամեծը ոչ միայն թողարկման տեսանկյունից, այլեւ Հայաստանի ժամանակակից պատմության մեջ: Մենք լիովին գիտակցում եւ կրում ենք միջազգային շուկաներում մեր երկիրը ներկայացնելու պատասխանատվությունը որպես տնտեսության շարժիչ ուժ: Սա եւս մեկ անգամ ապացուցում է, որ մենք մեր հաճախորդների կողքին ենք՝ աջակցելով նրանց բիզնեսի զարգացմանը, ինչպես նաեւ մշտապես լինելով երկրում իրականացվող խոշոր եւ մասշտաբային բիզնես ծրագրերի ֆինանսավորողը:»

Արդշինբանկի մասին

Արդշինբանկը Հայաստանի առաջատար բանկն է: Այն մատուցում է բազմաբնույթ ունիվերսալ բանկային ծառայություններ՝ տրամադրելով լուծումներ մանրածախ, կորպորատիվ, ներդրումային, ինչպես նաեւ փրայվիթ բանկինգի ու ակտիվների կառավարման ոլորտներում: Արդշինբանկն ունի շուրջ 570,000 հաճախորդ, որոնց սպասարկում է բանկի 2,300-ից ավելի աշխատակից: Բանկում ներդրված է ծառայությունների մատուցման հզոր բազմախողովակ պլատֆորմ՝ 72 մասնաճյուղերով:

Արդշինբանկը Հայաստանի միակ ընկերությունն է, որն ունի աշխարհի երեք առաջատար՝ Standard & Poor's (BB- (Stable)), Moody's (Ba3 (Stable)) եւ Fitch (BB- (Stable)) վարկանիշային ընկերությունների կողմից շնորհված վարկանիշեր: Բանկն ունի Հայաստանի Հանրապետության վարկանիշային մակարդակին հավասար վարկանիշ, ինչը մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշն է:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ

Սոֆթ Կոնստրակտ ընկերությունում օրերս տեղի է ունեցել Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության տարեվերջյան տեղեկատվական հանդիպումը, որը մեկ հարկի տակ էր համախմբել Հայաստանի տեխնոլոգիական համայնքի առանցքային դերակատարներին: Միջոցառմանը ներկա են եղել 200-ից ավելի տեխնոլոգիական ընկերությունների հիմնադիրներ, թիմերի անդամներ, գործընկերներ եվ ոլորտի ներկայացուցիչներ, որոնք իրենց ամենօրյա աշխատանքով ձեվավորում եվ զարգացնում են Հայաստանի տեխնոլոգիական միջավայրը:

Ողջույնի խոսքով հանդես է եկել «Բադալյան եղբայրներ» ընկերությունների խմբի համահիմնադիր, Սոֆթ Կոնստրակտ ընկերության խորհրդի անդամ Ռոման Բադալյանը՝ ներկայացնելով ընկերության ձեւավորման ճանապարհը եվ անցած ուղին: «Սոֆթ Կոնստրակտն այս պահի դրությամբ ունի 8000 աշխատակից, օֆիսներ՝ 16 երկրում, եւ տարբեր գործընկերներ 80-ից ավելի երկրներում»,-նշել է Ռոման Բադալյանը:

Հանդիպման ընթացքում շեշտվել է, որ ընկերությունը կարեւորում է տեղական տեխնոլոգիական ընկերությունների աջակցությունը՝ նպաստելով նրանց զարգացմանը եւ միջազգային տեխնոլոգիական միտումներին համընթաց առաջ շարժվելուն: Այդ աջակցությունը դիտարկվում է ոչ միայն որպես բիզնես ռազմավարություն, այլեւ որպես ներդրում Հայաստանի տեխնոլոգիական ապագայի ձեւավորման գործում:

Երեկոն եզրափակվել է ոչ պաշտոնական միջավայրում՝ հյուրասիրությամբ եւ երաժշտությամբ՝ շարունակելով ոլորտի ներկայացուցիչների միջեւ շփումն ու համագործակցության քննարկումները:

ՏՈԿԱԵՎՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԹՐԱՄՓԻ ՀՐԱՎԵՐԸ

Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը պաշտոնական հրավեր է ստացել ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփից՝ մտնելու Գազայի հարցով Խաղաղության խորհրդի կազմ: Այս մասին տեղեկանում ենք Kazinform-ից, այդ մասին հայտնել է պետության ղեկավարի մամուլի քարտուղար Ռուսլան Ժելդիբայը:

«Նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը համաշխարհային առաջնորդների թվում առաջիններից մեկն է, որը պաշտոնական հրավեր է ստացել մտնելու Խաղաղության խորհրդի կազմ, իսկ Ղազախստանը կդառնա հիմնադիր պետություններից մեկը: Ի պատասխան՝պետության ղեկավարը նամակ է ուղարկել ԱՄՆ-ի նախագահին՝ անկեղծ երախտագիտություն հայտնելով եւ հաստատելով իր համաձայնությունը՝ մտնելու այս նոր միավորման կազմ», - ասվում է Ժելդիբայի հայտարարության մեջ: Նա նշել է, որ Տոկաեւը հաստատել է Ղազախստանի ձգտումը՝ ուժերի ներածին չափով ներդրում ունենալ Մերձավոր Արեւելքում կայուն խաղաղության հասնելու, միջպետական վստահության ամրապնդման եւ գլոբալ կայունության գործում:

Թրամփն ավելի վաղ հայտարարել էր Գազայի հարցով Խաղաղության խորհուրդ ձեւավորելու մասին: Խորհրդի կազմում են ԱՄՆ-ի պետքարտուղար Մարկո Ռուբիոն, Թրամփի հատուկ դեսպանորդ Սթիվ Ուիթքոֆը, ԱՄՆ-ի ղեկավարի փեսան՝ ներդրող Ջարեդ Քուշները, Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Թոնի Բլերը, Համաշխարհային բանկի նախագահ Աջայ Բանգան եւ ԱՄՆ-ի ազգային անվտանգության հարցերով խորհրդականի տեղակալ Ռոբերտ Գեբրիելը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՐՎԵՍՏ, ՈՐԸ ՉԻ ՄԵՌՆՈՒՄ

ԶԱՌԱ ԱՐԱՄՅԱՆ. ԱՆՄԱՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Զառա Արամյանը (1970-2023թթ.) եղել է հայ ռադիոյի, հեռուստատեսության եւ կինոյի առաջատար դեմքերից մեկը, նրա ստեղծագործությունը տարիներ շարունակ ներշնչել է սերունդներին՝ ստեղծելով ուժեղ, բազմակողմանի արվեստի ժառանգություն:

Նրա գործունեությունն ընդգրկում էր ռադիոհաղորդումներ, հեռուստատեսային նախագծեր եւ դերասանական աշխատանքներ, որտեղ Զառան միշտ առանձնացել է խիզախությամբ եւ վերլուծական խորությամբ՝ սոցիալական եւ մշակութային թեմաներին անդրադառնալով:

Զառա Արամյանը ծնվել է 1970 թվականի հուլիսի 1-ին: 1993-1996 թվականներին աշխատել է Հայաստանի ազգային ռադիոյի «Հայաստանի ձայն» խմբագրությունում՝ արտասահմանի համար տրվող հաղորդումների բաժնում՝ որպես նորաստեղծ ռուսալեզու բաժնի ղեկավար: Այնտեղ նա վարել եւ խմբագրել է բազմաթիվ հասարակական, քաղաքական եւ մշակութային հաղորդումներ Սփյուռքի համար:

1996-2002 թվականներին Զառան աշխատել է նույն բաժնում՝ որպես գլխավոր խմբագրի տեղակալ: 1993-2002 թվականներին՝ ռադիոյի տարիներին, նա հեղինակել է «Հյուր Զառայի մոտ» ռադիոհաղորդումը, որը 1996 թվականից տեղափոխվել է հեռուստատեսություն՝ «Համով զրույց» անունով:

Նրա դերասանական կարիերան նույնպես հարուստ է: 1995 թվականից նկարահանվել է ավելի քան 300 հեռուստանախագծերում: Հանդես է եկել բազմաթիվ ֆիլմերում, որոնցից են՝ 1996թ. «Մեր բակը», 1998թ. «Մեր բակը 2», 2008թ. «Իրական պատմություններ» նովելը:

Ավելին, նա վարել է «Ակկորդ» հաղորդումը, որտեղ իր վարպետությամբ եւ անկեղծությամբ կարողացել է ուղիղ կապ ստեղծել հանդիսատեսի հետ: Զառա Արամյանի աշխատանքները ցույց են տալիս նրա բազմակողմանի հմտությունները՝ ռադիոյից ու հեռուստատեսությունից մինչեվ կինո եւ հեռուստահաղորդումներ, որտեղ նա միշտ խիզախորեն փորձարկել է նոր ձեւեր եւ ներկայացրել իրական, մարդակենտրոն պատմություններ:

Նրա ստեղծագործական ժառանգությունը շարունակում է կենդանի մնալ՝ ոգեշնչելով նոր սերնդի լրագրողներ, դերասաններ ու մշակութային գործիչներ, եւ հիշեցնելով, որ իրական արվեստը կարող է ձեւավորել հասարակության մտածողությունը ու զգացմունքները:

Զառա Արամյանը արվեստի տարբեր բնագավառներում թողեց անջնջելի հետք: Նրա աշխատանքը առանձնանում էր ուժեղ էմոցիաներով, ճշգրիտ վերլուծություններով եւ հասարակության խնդիրներին անդրադարձով: Հենց այս համադրությունը դարձնում էր նրա ստեղծագործությունը ոչ միայն գեղարվեստական արժեքավոր, այլ նաեւ սոցիալական նշանակություն ունեցող:

Արվեստի մեջ Զառան միշտ հետեւում էր մեկ սկզբունքին՝ արդարությունն ու ճշմարտությունը բացահայտել մարդկանց աչքերին ու սրտերին: Նրա ներկայացումները ու ելույթները հաճախ խոսում էին հասարակության թաքնված ճնշումների, անհավասարության եւ մարդկային էության մասին: Նրա մահը ոչ միայն արվեստի աշխարհին, այլ նաեւ հասարակությանը մեծ կորուստ բերեց: Սակայն Զառա Արամյանի ժառանգությունը շարունակում է իր ազդեցությունը՝ ներշնչելով նոր սերնդի ստեղծագործողներ եւ հիշեցնելով, որ իրական արվեստը դեռեւս կարող է փոխել մարդկանց մտածողությունը ու զգացմունքները:

Այսօր, երբ մենք հիշում ենք Զառա Արամյանին, հիշում ենք ոչ միայն մեծ արվեստագետին, այլեւ մարդուն, որի ստեղծագործությունը սովորեցրեց մեզ լինել խիզախ, զգայուն ու պատասխանատու: Նրա անունը կմնա անմար՝ որպես օրինակ եւ ժառանգություն հայ մշակույթի պատմության մեջ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐՔԱԿԱՆ

ԲԱՐՍԵԼՈՆԱՆ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԿՐԵՑ

Իսպանական Լա լիգայի 20-րդ տուրի շրջանակում կայացավ կենտրոնական հանդիպումներից մեկը՝ Սան Սեբաստիանի «Ռեալե Արենա» մարզադաշտում «Ռեալ Սոսյեդադը» ընդունել էր մրցաշարային աղյուսակի առաջատար «Բարսելոնային»: Հանդիպումը սպասարկում էր գլխավոր մրցավար Խեսուս Խիլ Մանսանոն:

Խաղն ավարտվեց տանտերերի՝ «Ռեալ Սոսյեդադի» հաղթանակով՝ 2:1: Հանդիպման հաշիվը 32-րդ րոպեին բացեց բասկյան թիմի առաջատար Միկել Օյարսաբալը: Երկրորդ խաղակեսի միջնամասում կատալոնացիներին հաջողվեց կարճ ժամանակով վերականգնել հավասարակշռությունը. 70-րդ րոպեին աչքի ընկավ «Բարսելոնայի» հարձակվող Մարկուս Ռեշֆորդը: Սակայն հյուրերի ուրախությունը երկար չտեւեց: Ընդամենը մեկ րոպե անց Գոնսալու Գեդեշը խփեց տանտերերի երկրորդ գնդակը՝ վճռելով հանդիպման ելքը:

Հատկանշական է, որ «Բարսելոնան» խաղն ավարտեց թվային առավելությամբ: 88-րդ րոպեին կոպիտ խաղի համար ուղիղ կարմիր քարտով հեռացվեց «Ռեալ Սոսյեդադի» ֆուտբոլիստ Կառլոս Սոլերը, սակայն մնացած ժամանակահատվածը բավարար չեղավ հյուրերին պարտությունից խուսափելու համար:

Այս պարտությունից հետո էլ «Բարսելոնան» պահպանում է առաջատարի դիրքը՝ իր ակտիվում ունենալով 49 միավոր: «Ռեալ Սոսյեդադը» վաստակեց 24 միավոր եւ բարձրացավ 9-րդ հորիզոնական:

Հունվարի 25-ին կայանալիք հաջորդ տուրում «Բարսելոնան» սեփական հարկի տակ կընդունի «Օվիեդոյին», իսկ «Ռեալ Սոսյեդադը» նույն օրը տնային հանդիպում կանցկացնի «Սելտայի» հետ:

ՆՈՐ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐԶԻՉ ՈՒՆԻ

Երեւանի «Արարատը» նոր գլխավոր մարզիչ ունի: Ակումբը պաշտոնապես հայտարարել է պորտուգալացի մասնագետ Ռիկարդո Դիոնիսիոյի նշանակման մասին, հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը:

43-ամյա մասնագետը մարզչական հարուստ փորձ ունի: Նախկինում նա գլխավորել է Շվեյցարական «Լոզան Ուշի», «Սիոն» եւ «Նիոն» ակումբները:

Դիոնիսիոն աշխատել է նաեւ որպես գլխավոր մարզչի օգնական բրազիլական «Բոտաֆոգոյում» եւ «Բահիայում», մեքսիկական «Լեոնում», ինչպես նաեւ էկվադորական «Ինդեպենդյենտեում»: Իր կարիերայի սկզբում նա որպես ֆիզպատրաստության մարզիչ աշխատել է պորտուգալական այնպիսի առաջատար ակումբներում, ինչպիսիք են «Բրագան», «Սպորտինգը» եւ «Պորտուն»:

Նորանշանակ մարզչի շտաբում ընդգրկվել են էկվադորցի Մարկո Դուրան Մոնտենեգրոն, Գեւորգ Պողոսյանը, ինչպես նաեւ դարպասապահների մարզիչ Էրիկ Խաչատրյանը:

ԺԱՄԱՆՑ

ՖՐԻԴ ՍՈՂՈՅԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ-ում զբոսաշրջության ոլորտի ռազմավարական ծրագրի իրագործման շրջանակներում՝ մշակութային բաղադրիչի ներկայիս մարտահրավերներին ընդառաջ, ՀՀ Զբոսաշրջության կոմիտեի նախագահ Լուսինե Գեւորգյանը հանդիպել է «Ֆրիդ Սողոյան» մշակութային հիմնադրամի հիմնադիրների խորհրդի նախագահ Տիգրան Մանուկյանի հետ: Այս մասին հայտնում է ՀՀ Զբոսաշրջության կոմիտեն՝նշելով, որ հիմնադրամը նպատակ ունի ՀՀ հանրությանը եւ օտարերկրյա այցելուներին ներկայացնելու հայ նշանավոր քանդակագործ, Գյումրու պատվավոր քաղաքացի, ՀՀ, ՌԴ եւ Ուկրաինայի ժողովրդական նկարիչ, Լենինյան մրցանակի դափնեկիր Ֆրիդ Սողոյանի արվեստն ու մշակութային ժառանգությունը:

Մշակութային հիմնադրամի առաջնահերթություններից են 2021 թվականից գործող Հուշատուն-ցուցասրահի ամբողջական հիմնանորոգումը եւ արդիական մշակութային կենտրոնի ստեղծումը՝ հայ արվեստի առավել հանրահռչակման, ուսումնակրթական եւ վարպետաց դասընթացների, ինչպես նաեւ մշակութային տարբեր միջոցառումների կազմակերպման նպատակով, որոնք զգալիորեն կնպաստեն զբոսաշրջային հոսքերի ավելացմանը:

Կոմիտեից նշում են, որ զարգացող գործընթաց ապահովելու նպատակով Կոմիտեի նախագահի հետ քննարկման ընթացքում նախանշվել են առաջնահերթ քայլերի իրագործման եւ փոխհամագործակցության հնարավորությունները:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՊՐԵԼ

«Արցախի մշակույթի եւ զբոսաշրջության զարգացման գործակալություն» ՀԿ նախագահ Սերգեյ Շահվերդյանը գրում է. «Հանրությունը քիչ պատկերացում ունի այն փորձությունների ու դժվարությունների մասին, որոնց միջով անցել են միջոցառման կազմակերպիչները: Խնդիրը միայն ֆինանսական դժվարությունները չէին:Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրհներգի կատարումն արգելվեց: Դրոշի եւ զինանշանի օգտագործումը արգելվեց: Շատ բաներ, որոնք մեզ համար խորհրդանիշներ չեն, այլ մեր ինքնության եւ հիշողության մաս են կազմում, արգելվեցին:

Եւ, այնուամենայնիվ, չնայած այս սահմանափակումներին եւ չարտահայտված ճնշումներին, միջոցառումը տեղի ունեցավ: Այն դարձավ ամենամեծ մշակութային միջոցառումը բռնի տեղահանությունից ի վեր:

Խորին հարգանք եւ երախտագիտություն բոլոր նրանց, ովքեր ստանձնեցին այս պատասխանատվությունը եւ հասցրին այն մինչեւ վերջ: Սա ավելին էր, քան պարզապես միջոցառում. սա արժանապատվության եւ մոռացության դիմադրության դրսեւորում էր»:

2026 թվականի հունվարի 18-ին Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայացավ Արցախի մշակույթին նվիրված լայնածավալ «ՄԵՆՔ ԿԱՆՔ» մշակութային միջոցառումը, որը մեկ հարկի տակ համախմբեց Արցախի գրեթե բոլոր մշակութային կոլեկտիվներին, ինչպես նաեւ հայաստանյան եւ արցախյան ճանաչված մենակատարներին:

Օրվա ընթացքում համալիրի տարածքում գործեց ցուցահանդես, տեղի ունեցավ ցուցադրությունների ներկայացում եւ տաղավարների ներկայացուցիչների անմիջական շփում այցելուների հետ, իսկ երեկոյան կայացավ մեծ համերգ՝ բարձր մակարդակի կատարումներով եւ բացառիկ մասնակցությամբ:

Միջոցառումը կյանքի կոչվեց Արցախյան մշակույթի պահպանման կենտրոն ՀԿ եւ «ՄՈՒՆՔ» տեխնոդպրոցի նախաձեռնությամբ եւ կազմակերպմամբ՝ դառնալով կարեվոր հարթակ Արցախի մշակութային ժառանգության ներկայացման, համախմբման եվ շարունակականության ապահովման համար:

● Հունվարի 20-ին՝ 19:30-ին, Հովհաննես Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում տեղի կունենա Արցախյան սիրո հեքիաթ կամ ԱՐԱ, ՊԱ ՍՏԻ ՊԵՆ ԿԻՆԻ՞ ներկայացումը:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Գործատուն վերջնահաշվարկիս գումարը պակաս է հաշվարկել, պահումներ արել: Ի՞նչ անեմ եւ ո՞ւմ դիմեմ:

Կարեն Գալստյան (45 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատանքից ազատվելու դեպքում ազատման օրը կամ ոչ ուշ, քան աշխատողի նման պահանջ ներկայացնելուց հետո՝ 3-օրյա ժամկետում, գործատուն պետք է կատարի վերջնահաշվարկ եւ այն վճարի աշխատողին:

Վերջնահաշվարկի մեջ են ներառվում աշխատանքի ազատման օրվա դրությամբ աշխատած եւ չվարձատրված օրերի համար աշխատավարձի գումարները, չօգտագործված արձակուրդի համար վճարումները, աշխատավարձին հավասարեցված այլ բոլոր վճարումները: Հաշվի առնելով, որ վերջնահաշվարկի գումարը եւս աշխատողի համար հանդիսանում է եկամուտ, այդ գումարից ենթակա են հարկերի վճարումներ, որոնք հենց այն պահումներն են, որոնք կատարվում են գործատուի կողմից:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե պարզեք, որ հաշվարկը սխալ է կատարված եւ Ձեզ պակաս են վճարել վերջնահաշվարկը, ապա կարող եք դիմել գործատուին՝ պահանջելով վճարել պակաս վճարված վերջնահաշվարկը: Եթե գործատուն հրաժարվի վճարել կամ ցուցաբերի անգործություն, ապա պետք է դիմեք դատարան՝ վերջնահաշվարկի պակաս վճարված գումարը գանձելու պահանջով: Կարող եք պահանջել նաեւ, որ գործատուից գանձվեն տույժի գումարները, որը կազմում է յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի 0.15%-ը:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես գրառում եմ արել սոցցանցում, եւ այն արտատպել են: Դա օրինակա՞ն է:

Հովհաննես Սիմոնյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե Ձեր կողմից կատարված գրառումը Ձեր ստեղծագործական մտքի արդյունք է՝ բանաստեղծության, պատմվածք, երգի բառեր կամ այլ ստեղծագործություն, ապա այն պաշտպանվում է հեղինակային իրավունքով: Ստեղծագործություն հանդիսացող գրառումը հրապարակելու պահից ծագում է դրա նկատմամբ անձի հեղինակային իրավունքը, եվ դրա օգտագործման համար յուրաքանչյուր այլ անձ պարտավոր է ստանալ Ձեր թույլտվությունը եւ համաձայնությունը՝ հղում կատարելով հեղինակին:

Եթե Ձեր գրառումը կամ հրապարակումը տարածվել է այլ օգտատերերի կողմից, ապա անհրաժեշտ է դիմել Ձեր գրառումն օգտագործած անձին/անձանց պահանջելով՝ հեռացնել գրառումը կամ ավելացնել հեղինակին կամ աղբյուրին հղումը:

Եթե Ձեր ներկայացրած պահանջները չեն կատարվում կամ անձը Ձեզ հայտնի չէ, ապա անհրաժեշտ է.

1. Դիմել համապատասխան սոցիալական ցանցի ադմինիստրացիա՝ ներկայացնելով, որ Ձեր հրապարակումն օգտագործվել է այլ անձի կողմից առանց Ձեր թույլտվության (unauthorized use), որի հիման վրա Դուք պահանջում եք արգելափակել տվյալ օգտատիրոջը:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Սոցիալական ցանցերում արվող գրառումների, դրանց հրապարակման եւ օգտագործման կարգը սահմանվում է տվյալ սոցիալական կարգի օգտագործման կանոններով, ինչպես նաեւ միջազգային եւ ներպետական օրենսդրությամբ: Գրեթե բոլոր սոցցանցերում հնարավոր է կարգավորել հրապարակման լսարանը, այսինքն՝ հասանելի դարձնել հրապարակումը միայն ընկերների, ընկերների խմբի, կոնկրետ մարդկանց կամ առհասարակ բոլորի համար: Յուրաքանչյուր անձ ինքնուրույն կարող է որոշել, թե իր սոցիալական կայքում բացված այս կամ այն էջում կատարվող գրառումները կամ այլ հրապարակումները ովքեր տեսնեն եւ ինչպիսի հասանելիություն ունենան: Ըստ այդմ, հրապարակման մասին իրենց կարծիքը հայտնելու կամ այն տարածելու ազատ հնարավորություն ունի ցանկացած անձ, որին այդ գրառումն ի սկզբանե հասանելի է դարձրել գրառում կատարած անձը, եւ դրա համար պարտավոր չէ նախապես թույլտվություն խնդրել:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Սպուտնիկ»-ի

Քրիստոսի արձանի շինաշխատանքները, անկախ եղանակային պայմաններից, շարունակվում են: Չի դադարում նաեւ աշխարհի տարբեր անկյուններից եկող հյուրերի հոսքը: Այս մասին գրել է Գագիկ Ծառուկյանը. «Այս նախաձեռնությունը՝ որպես ազգային նոր կոնսոլիդացիայի կենտրոն, դարձել է համերաշխության եւ ներքին հաշտության խորհրդանիշ՝ իր շուրջը միավորելով արդեն իսկ հարյուր հազարավոր մարդկանց Հայաստանից եւ սփյուռքից»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 10 - 15 - 4 - 8
Կոտայքի լեռներ	-10 - 14 -4 -7
Կոտայքի նախալեռներ	- 4 - 8 0 -3
Գեղարքունիք	- 11 - 15 - 4 - 8
Լոռի	- 8 - 13 -1 -5
Տավուշ	- 5 - 10 -1 -4
Արագածոտնի լեռներ	- 11 - 15 - 4 - 7
Արագածոտնի նախալեռներ	- 3 - 8 0 -4

Արարատ	- 3 - 6 0 -3
Արմավիր	- 2 - 6 0 + 3
Վայոց ձորի լեռներ	-10 - 13 -4 -8
Վայոց ձորի նախալեռներ	- 3 - 6 -2 + 1
Սյունիքի լեռներ	-11 - 14 -5 - 8
Սյունիքի նախալեռներ	- 8 -13 - 3 - 6
Սյունիքի հովիտներ	-2 - 5 -2 + 1
Երեւան	- 6 - 4 - 4 - 2

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.1.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*